



ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ COVID-19-Ի ԾՐԱԳԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՒԼ 1

Արտակարգ իրավիճակների վարձակալության օժանդակության ծրագիրը (ERAP-C19) ցածր եկամտին համապատասխանող ընտանիքների անունից տանտերերին վարձավճարներ է տրամադրում՝ ամսական մինչև \$750, երկու ամսվա համար՝ առավելագույնը \$1,500 օժանդակություն:

Ո՞վ է իրավասու. Այն վարձակալ բնակիչները, որոնց բնակավայրը պահպանելու և/կամ չվճարած վարձավճարները նվազեցնելու օժանդակություն է հարկավոր:

1. Պետք է Գլենդեյլի բնակիչ լինեն:
2. Պետք է օրինական վարձով տրվող բնակարան վարձելիս լինեն (կամ ենթավարձակալություն) և ունենան ուժի մեջ վարձակալության կամ ենթավարձակալության պայմանագիր: Հավելյալ տեղեկություն, ինչպիսին է կոմունալների հաշիվները կամ որոշ փոստային ծառայությունները, ևս կպահանջվի հաստատելու համար, որ ընտանիքը բնակարանը զբաղեցնող վարձակալ է:
3. Պետք է համապատասխանեն որպես ցածր եկամուտ ունեցող ընտանիք (շրջանի միջին եկամտի 80% կամ ցածր) Ընտանիքի ընդհանուր եկամուտը չի կարող գերազանցել ստորև նշված առավելագույն թիվը՝ ըստ բնակավայրի ընտանիքի չափի, որը հաստատված է HUD-ի կողմից: Յուրաքանչյուր դիմորդից կպահանջվի ներկայացնել եկամտի համապատասխանությունը հաստատող փաստաթղթեր:

2020 Եկամտի Կատեգորիա	1 անձ	2 անձ	3 անձ	4 անձ	5 անձ	6 անձ	7 անձ	8 անձ
Ցածր Եկամուտ (80%AMI)	\$63,100	\$72,100	\$81,100	\$90,100	\$97,350	\$104,550	\$111,750	\$118,950

4. Պետք է տնտեսապես COVID-19 համավարակի հետևանքով տուժած լինեն: Տուժելը կարող է ներառել հետևյալ կետերից որևէ մեկը.
 - Վճարովի աշխատանքից եկամտի կորուստ՝ COVID-19-ի հետևանքով ժամերի կրճատման պատճառով (օրինակ՝ աշխատանքից ազատում, աշխատաժամերի կորուստ, եկամտի նվազեցում և այլն):
 - Եկամտի կորուստ COVID-19-ով հիվանդ լինելու պատճառով կամ այդ հիվանդությանը հիվանդացած բնակավայրի/ընտանիքի անդամին խնամելու պատճառով:
 - COVID-19-ի հետևանքով հավելյալ ծախսեր (օրինակ՝ դպրոցի փակման պատճառով երեխաների խնամք, բժշկական ծախսեր կամ կառավարության հրամաններին համապատասխանելու պատճառով ծախսեր և այլն):
 - Եկամտի կորուստ կառավարության կողմից արտակարգ իրավիճակների ժամանակ առողջության համար տանը մնալու, ինքնամեկուսացման կամ այլ անձանց հետ հավաքվել խուսափելու հրամանի պատճառով:
 - Եկամտի կորուստ COVID-19-ի արտակարգ իրավիճակներին վերաբերող այլ գործոնների պատճառով:
5. Պետք է արտակարգ իրավիճակները մեղմացնող նույն նպատակով օգնություն արդեն ստացած չլինեն տեղային, նահանգային կամ դաշնային գործակալություններից (IRS-ի կողմից տրված դաշնային խթանման չեկերը (Stimulus Check) այս կանոնում բացառություն են):
6. Պետք է վարձակալվող բնակավայրի տիրոջ հետ ընտանեկան հարաբերություն չունենան:
7. Պետք է ներառված չլինեն <<Section 8>> ծրագրում, ներկայումս ապրելիս չլինեն քաղաքի կողմից հովանավորվող մատչելի բնակավայրում կամ գրանցված որևէ այլ բնակավայրային օժանդակության ծրագրում:

Ինչպես դիմել. Շրջան 1-ի դիմումները կընդունվեն միայն առցանց, 2020թ. հուլիսի 1-ից (կեսօրվա ժամը 12:00) մինչև 2020թ. հուլիսի 15-ը (կեսօրվա ժամը 12:00): ERAP-C19-դիմումի հղումը կարող եք գտնել Glendaleca.gov հասցեով՝ 2020թ. հուլիսի 1-ից (կեսօրվա ժամը 12:00):

Հարցե՞ք. Խնդրում ենք հարցերը ուղարկել էլեկտրոնային փոստով՝ ERAPCOVID19@Glendaleca.gov հասցեով կամ զանգահարել՝ (818) 548-2069: